

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2015 թվականի N 3_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 26-ի N197-Ա որոշումը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008 թվականի մարտի 22-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» N27-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կազմը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

U. HAKHAKIAN

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ




2015թ. հունվարի 20
ք. Կապան

Կազմ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով
գբաղվող մարզային հանձնաժողովի

1. Դավթյան Վարդան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
2. Շահնազարյան Արամ - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
3. Հովհաննիսյան Հարություն- ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
4. Ալեքսանյան Հովիկ - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
5. Ավետիսյան Ռազմիկ - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար
6. Ավետիսյան Սեյրան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
7. Կոզմանով Կառլեն - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
8. Ոսկանյան Աննա - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
9. Արզումանյան Անահիտ - «Կարմիր խաչի» Սյունիքի մասնաճյուղի գործադիր տնօրեն
10. Հարությունյան Խորեն - «Ազատամարտ» կոմիտեի նախագահ
11. Դավթյան Կամո - «Ողջի» ՀԿ-ի նախագահ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Ռ. Ղազարյան